

Ծ Ր Ա Գ Ր Ե Ր

Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի համակարգում՝ որպես երկարաժամկետ ռազմավարություն առկա գեոդեզիայի, քարտեզագրության և հողաշինարարության ոլորտների

ՀՀ	Միջոցառումների և աշխատանքների անվանումները	Միջոցառումների և աշխատանքների իրականացման ժամկետները	Ընդհանուր գումարը (հազ. դրամ)	Աշխատանքների նպատակը
1	Դիլիջանի տարածաշրջանի գեոդինամիկական պոլիգոնի ստեղծման գեոդեզիական աշխատանքներ	4 տարի	39 610.447	Աշխատանքների հիմնական նպատակն է փուլային դիտարկումներից ստացված տվյալների վերլուծության հիման վրա կստացվեն բարձունքային նիշերի համեմատական տվյալները, որի հիման վրա էլ կունենանք ուղղաձիգ և հորիզոնական տեղաշարժերի մեծություններն ու ուղղությունները:
2	ՀՀ տարածքում գտնվող գործող ջրամբարների պատվարների դեֆորմացիաների ուսումնասիրում /Կառնուտ, Մանթաշ, Վարդաքար/	4 տարի	61 015.918	Հայաստանի Հանրապետության ջրամբարների պատվարների դեֆորմացիաների ուսումնասիրության ինժեներա-գեոդեզիական աշխատանքների վերաբերյալ տվյալների հավաքագրում: Արհեստական ջրամբարների հիդրոտեխնիկական կառույցների՝ առանձնապես պատվարների դեֆորմացիաների ուսումնասիրումը օբյեկտների անվտանգության չափանիշների պահպանման ազգային ռազմավարական հիմնախնդիրների լուծման համար:
3	ՀՀ տարածքում քվադրագեոիդի մոդելի ստեղծման աշխատանքներ	3 տարի	92 442,038	Արդյունքում կստանանք քվադրագեոիդի ճշգրտված թվային մոդելը, որը կնպաստի բարձրացնելու ՀՀ տարածքում տեղադրված իրական ժամանակում մշտական գործող ռեֆերենց կայանների ձևափոխվող՝

				տրանսֆորմացիոն պարամետրերի ճշգրտման մակարդակը, որն էլ կապահովի “ՌՌՎԵՐ” դիտարկման GPS կայաններից անմիջապես ստանալու կետի տեղադիրքի կոորդինատները WGS-84/ArmREF02/ համակարգում և տնտեսել զգալի ֆինանսական միջոցներ, քանի որ մի շարք ծրագրերում վերանում է դաշտային աշխատանքների կատարման անհրաժեշտությունը: Աշխատանքի արդյունքը կկիրառվի ցանկացած բնագավառում:
4	ՀՀ բազային երկրատեղեկատվական համակարգի ստեղծման և ներդրման աշխատանքներ	7 տարի	18 323 795,0	ՀՀ պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններին տնտեսության տարբեր ոլորտների խնդիրների արդյունավետ լուծման, բնական և տնտեսական ռեսուրսների վերաբերյալ տվյալների (քարտեզագրական և տեքստային) պետական միասնական տեղեկատվական բանկի ստեղծման և հանրապետության ռեսուրսների կառավարման արդյունավետության բարձրացման համար:
5	ՀՀ պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների (շահառուների) համար բազային երկրատեղեկատվական համակարգի ներդրում Երևան քաղաքում	2 տարի	689 411,0	Ներդրվող Երևան քաղաքի բազային երկրատեղեկատվական համակարգը հիմք է հանդիսանալու գերատեսչական տարբեր բնագավառների, այդ թվում՝ քաղաքաշինական, բնապահպանական, արդյունաբերական, անշարժ գույքի կադաստրի, տարածքների պլանավորման, հողերի օգտագործման և գոտիավորման սխեմաների կազմման, գույքահարկի և գնահատման բազաների ճշգրտման, վարչական և տնտեսական գործունեության, անտառտնտեսության, արտակարգ իրավիճակների ժամանակ օպտիմալ և օպերատիվ որոշումների կայացման, համայնքի և առանձին տարածքների

				զարգացման, օպտիմալ պլանավորման և այլ բնագավառների խնդիրների լուծման համար:
6	ՀՀ տարածքի օդալուսանկարահանման նյութերի հիման վրա քաղաքների 1:2000 մասշտաբի տեղագրական հատակագծերի ստեղծման աշխատանքներ	7 տարի	1 306 680.8	<p>ՀՀ պետական մասշտաբային շարքի քարտեզները հիմք են հանդիսանում գերատեսչական տարբեր ոլորտների /քաղաքաշինական, բնապահպանական, արդյունաբերության, կադաստրի, տարածքների պլանավորման, գյուղատնտեսական հողերի հաշվառման, հողերի միավորման, հողերի օգտագործման և գոտիավորման սխեմաների կազմման, վարչական և տնտեսական գործունեության, մելիորացիայի, երկրաբանական հետախուզական աշխատանքների, անտառտնտեսության և այլն/ խնդիրների լուծման նպատակով ստեղծվելիք քարտեզագրական նյութերի համար:</p> <p>Թվային քարտեզները հնարավորություն են տալիս անհրաժեշտության դեպքում տեղեկատվությունը տրամադրել ոչ միայն ողջ քարտեզի ծավալով, այլև առանձին շերտերի ձևով, որով վերջնականապես կկարգավորվի տեղեկատվության տրամադրման սահմանափակման խնդիրը և քաղաքացիական օգտագործման նպատակներով քարտեզների և հատակագծերի հրատարակումը:</p>
7	ՀՀ պետական մասշտաբային շարքի քարտեզների ձևափոխումը ԻՍՈ միջազգային ստանդարտներին համապատասխան	2 տարի	309 799.02	Ծրագրի արդյունքում ստեղծված թվային տեղագրական և կադաստրային քարտեզներն ու հատակագծերը հիմք են հանդիսանալու գերատեսչական տարբեր ոլորտների, այդ թվում քաղաքաշինական, բնապահպանական, արդյունաբերական, անշարժ գույքի կադաստրի, տարածքների պլանավորման, գյուղատնտեսական հողերի հաշվառման, հողերի միավորման, հողերի օգտագործման և գոտիավորման սխեմաների կազմման, գույքահարկի և գնահատման բազաների ճշգրտման, վարչական և տնտեսական

				գործունեության, մելիորացիայի, երկրաբանական հետախուզական աշխատանքների, անտառտնտեսության, արտակարգ իրավիճակների ժամանակ օպտիմալ և օպերատիվ որոշումների կայացման, հանրապետության մարզերի, համայնքների և առանձին տարածքների զարգացման, օպտիմալ պլանավորման և այլ ոլորտների խնդիրների լուծման համար:
8	Երևան քաղաքում նավիգացիոն համակարգերի ներդրում	2 տարի	412 678.4	Համակարգն անհրաժեշտ է պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմիններին և քաղաքացիական ոլորտների հիմնախնդիրներն արդյունավետ լուծելու համար: Նավիգացիոն համակարգի աշխատանքի հիմքում դրված է երթևեկության ուղիների օպտիմալ հաշվարկն ու ընտրությունը. կողմնորոշումը տեղանքում, մոնիտորինգը (վերահսկում), դիսպետչերացումը, տելեմատիկան, վերլուծությունը և տրանսպորտի շահագործումը:
9	Հայաստանի Հանրապետության նավիգացիոն համակարգերի ներդրման աշխատանքներ	5տարի	3 782 512.0	Համակարգն անհրաժեշտ է պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմիններին և քաղաքացիական ոլորտների հիմնախնդիրներն արդյունավետ լուծելու համար: Նավիգացիոն համակարգի աշխատանքի հիմքում դրված է երթևեկության ուղիների օպտիմալ հաշվարկն ու ընտրությունը. կողմնորոշումը տեղանքում, մոնիտորինգը (վերահսկում), դիսպետչերացումը, տելեմատիկան, վերլուծությունը և տրանսպորտի շահագործումը:
10	Թեմատիկ քարտեզագրության բնագավառում	4 տարի	141 880.0	Շարունակվելու են հրատարակչական պետական նշանակության աշխատանքները ստեղծելով Ազգային ատլասի անգլերեն և ռուսերեն տարբերակները, այլ հիմնարար ատլասներ և քարտեզներ նաև կրթական

				<p>համակարգի համար: Այս ուղղությամբ իրականացված աշխատանքների արդյունքում նախկինում հրատարակվել են 32 անվամբ ուսումնական քարտեզներ, որոնք անվճար տրամադրվել են Հայաստանի Հանրապետության և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության դպրոցներին: Այս աշխատանքներն անհրաժեշտ է դարձնել շարունակական և յուրաքանչյուր տարի հրատարակել կամ թարմացված տեսքով վերահրատարակել առնվազն 5-ական քարտեզ:</p> <p>Համահունչ լինելով ՀՀ կառավարության ծրագրին զբոսաշրջության ոլորտի զարգացման համար անհրաժեշտ է ստեղծել և հրատարակել տարաբնույթ տուրիստական քարտեզներ բուկլետների տեսքով և ճանապարհային ատլասներ: Այս պատկերազարդ և տեղեկատվաշատ քարտեզները մատչելի ձևով կներկայացնեն Հայաստանը օտարերկրյա զբոսաշրջիկներին:</p>
11	<p>ՀՀ աշխարհագրական անվանումների բնագավառում նախատեսվող աշխատանքներ</p>	7 տարի	118 300.0	<p>Աշխատանքների իրականացման արդյունքում կունենանք ՀՀ և աշխարհի աշխարհագրական անվանումների փոփոխված և վերականգնված հայեցի գրելաձևով մի շտեմարան, որն անհրաժեշտ է պետական կառավարման մարմինների, ինչպես նաև գիտական և կրթական համակարգերի համար: Բացի այդ շարունակվելու են հրատարակվել պատկերազարդ և տեղեկատվությամբ լի տարատեսակ տեղեկատու-բառարանները Հարկ է նշել, որ նմանատիպ աշխատանքները հանդիսանում են ՄԱԿ-ի աշխարհագրական անվանումների բնագավառում բարեփոխումների ծրագրերի անբաժան մասը:</p>
12	<p>ՀՀ համայնքների գյուղատնտեսական հողերի կադաստրային</p>	3 տարի	1 242 405.4	<p>Տնտեսագիտական հետազոտությունների հիման վրա կատարված կադաստրային գնահատման իրականացումը թույլ կտա մեթոդապես ճիշտ հիմքերի</p>

	<p>գնահատման աշխատանքներ</p>			<p>վրա դնել գյուղատնտեսական հողատեսքերի գների սահմանումը, հողի հարկի, վարձավճարի, գրավի նորմաների որոշումը և արդյունավետ հողօգտագործման տարբեր բնույթի փոխհարաբերությունների կարգավորումը:</p> <p>Հետազոտություններից ստացված նյութերը լայն օգտագործում կստանան հանրապետության տարբեր բնագավառներում՝ գյուղատնտեսության, բնապահպանության, քաղաքաշինության, գիտության և այլ ոլորտներում: Ստացված նյութերի հիման վրա կարող են կազմվել մարզերի, ջրահավաք ավազանների, առանձին շրջանների հողաշինարարական, հողագիտական, երկրաբուսաբանական և այլ հատակագծեր և քարտեզներ:</p>
<p>13</p>	<p>Հողերի խոշորացում /25 համայնք/</p>	<p>5 տարի</p>	<p>500 000.0</p>	<p>Քանի որ հողերի խոշորացման միջոցով հնարավոր կլինի ապահովել գյուղատնտեսական նշանակության հողամասերի օգտագործման տնտեսական արդյունավետության բարձրացումն՝ այդ հողերը որպես արդյունավետ արտադրության միջոց ձևավորելը, գյուղատնտեսական նշանակության հողամասերի իրացվելիության մակարդակի բարձրացումն ու շուկայի զարգացումը:</p> <p>Հողերի խոշորացման իրականացումը կնպաստի նաև սեպաձևության վերացմանն ու մեկ տնտեսությանը պատկանող տարբեր վայրերում գտնվող հողամասերը որպես մեկ գույքային համալիր ձևավորելուն, ենթակառուցվածքների զարգացման ռացիոնալ պլանավորմանը և դրանց ծախսատարության նվազեցմանը, գյուղատնտեսական գործունեության մեջ ծախսերի կրճատմանը:</p>

